



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

114
1970 6

№ 13 ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ՄԱՆԿԱՆ ՎԱՐՃԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 13

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ
ՅԵՐԵԽԱՅԻ ԽԱՂՆ ՈՒ
ԶՎԱՐՃՈՒԹՅՈՒՆԸ

Կազմեց՝ Մ. ԴՈՒՐԳԱՐՅԱՆ

ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ՎԱՐՃԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ — ՅԵՐԵՎԱՆ
1929

80



U. S. A.

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՅԵՐԵՒԱՅԻ ԽԱՂՆ ՈՒ ԶՎԱՐՃՈՒԹՅՈՒՆԸ

15802
A 7955
20851

Կազմեց՝ Մ. ԳՈՒՐԳԱՐՅԱՆ



ԹՈՒՆԿԱՏՐՎՈՒՄ Ե
ՊԵՏՂԻՏԻՍՏՐԻԻ ԿՈՂԱԽԳ

Հր. № 1072: Գրատեպլար № 2758 (Բ): Տիրած 3000:

Պետհրատի պռաջին տպարանի վարչարչապատում:
Պատվեր № 152:

ԻՆՉՊԻՍԻ ԶՎԱՐՃԱՆՔՆԵՐ ԵՆ ՊԵՏԲ
ՆԱԽԱԴՊՐՈՅԱԿԱՆ ՅԵՐԵՆԱՅԻՆ

ՅԵՐԵՆԱՅԻ ԳՈՐԾՈՒ-
ՆԵՅՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ

Նախադպրոցական լերե-
խալի որդանիզմն աճման
ու դարգացման բուռն շըր-
ջանն և ապրում. այդ տարիքի լերեխան ակ-
տիվ և, ինքնագործունյա, շարժուն: Բացի
քնի ու հանգստի ժամերից, մնացած ժամա-
նակը լերեխան վորհե գործունեյություն և
կատարում:

Սակայն գործունեյության բոլոր ձևերը
սերտ կերպով կապակցված են և միայն վո-
րոշ մոմենտներում են առանձնացվում. այս-
պես՝ լերեխան նկարելիս վարժվում և, գրա-
ֆիկ ունակություններ և ձեռք բերում. գրա-
մատիկացիալի ժամանակ լերեխան խոսում
և, պատմում, արտասանում և այլն:

Յեթե մենք վերլուծենք լերեխալի գոր-
ծունեյությունը, կտեսնենք, վոր բոլոր տե-

սակի արտահայտութիւնների նշանակու-
թիւնը նուցնն է—ստանալ նոր տպավորու-
թիւններ ու չեղածներն ամրացնել, հար-
մարվել շրջապատի պայմաններին, հաղթա-
հարել արգելքները, ծանոթանալ նյութերին
ու վերամշակել, ճանաչել իրերն ու ոգտա-
գործել, համեմատել, դատել, գործողութիւն
մեջ դնել զգայարանները, միանները և այլն:

Շրջապատի բոլոր չերե-
ՅԵՐԵՍԱՅԻ ՄԻՔԱՆԻ ՎՈՒՅԹՆԵՐՆԵՐՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒ ԿՎՈՒՅԹՆԵՐՆԵՐՆ
ԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ԸՆԴՈՒՆԵՐ ԵՆ
ԶՎԱՐՃԱՆՔՆԵՐԻ ԱՆՎՈՒՆԵՐ ԵՆ
ՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԿՎՈՒՅԹՆԵՐՆԵՐ
ԵՆ
Շրջապատի բոլոր չերե-
վույթներն ազդում են չե-
րեխայի վրա, վորոշ գըր-
վուներ են առաջացնում և
տպավորութիւններ են
հազորդում. այդ տպավո-
րութիւններն ընդունում և չերեխան իր
զգայարանների միջոցով, տեսողութիւն,
լսողութիւն, շոշափելիքի, ճաշակելիքի (լե-
զու), հոտոտելիքի (քիթ), մաշկի և այլն.
կան այնպիսի տպավորութիւններ, վոր չե-
րեխան ըմբռնում և մարմնի դանազան մա-
սերով՝ մկաններով, մաշկով, մատներով,
որինակ՝ ծանրութիւնը, ջերմութիւնը, ծա-
վալը և այլն:

Այս բազմազան տպավորութիւններն ըն-

դունելու և վերաբարձարելու համար անհրաժեշտ և վորոշ չեռանդ, եներզիա սպառելիս և քանի վոր այդ տպավորութիւնների մեծագունն մասը չերեխաչի համար նոր և ու անծանոթ, մյուս կողմից չերեխան դեռ ևս վորձ և վարժութիւններ չունի, ուստի նա ավելի չեռանդ և սպառում, քան թե չափահաս մարդը: Յերեխաչի ուղեղը քընքուշ և, գտնվում և աճման շրջանում, ուստի և ավելորդ տպավորութիւնները հոգնեցնում են նրան, գրգռում, ջղայնացնում և չերեխան կորցնում և իրեն տիրապետելու կարողութիւնը (գառնում և «Չղային», «Քմահաճ» և այլն):

Յերեխան մեծ հակումն ունի նմանվելու շատ հաճախ նրա խաղը կամ աշխատանքը արդշունք և իր տեսածի նմանվելուն, անկախ այն հանգամանքից, զբաղան թե բացասական բնույթ և կրում այդ չերը նա իրենից մեծին հարբած և տեսնում, չի քննադատում՝ լավ և, թե վատ, այլ ընդորինակում և սակայն մեծն՝ իր հերթին՝ այդպես «հեշտութիւն» ու անմիջականորեն չի հասկանում չերեխաչին և շատ զեպքերում վար-

վում ե ըստ իր սովորութիւնների ու հասկացողութեան. մեծի ու չերեխայի մեջ հսկայական տարբերութիւն կա. ահա թե ինչու չերեխան ավելի շատ եւս իրում իր հասակակիցներին, ավելի չե ձգտում իրենից մեծ յերեխաներին, քան թե չափահասներին:

Ամփոփելով մեր ասածը չերեխայի մի քանի առանձնահատկութիւններէ մասին, կարող ենք չեզրակացնել, վոր նախադպրոցականը շուտ ե հոգնում, չի կարողանում իր ուսարարը յանդէս բերել սեփականութիւն կենտրոնացնել միյեվնույն բանի վրա, դուրագրգիռ ե, դուրահավատ, անհանգիստ ու վախկոտ (չերեզուցիների անձանութիւն), անհոգ ե ու նմանվող:

Այս առանձնահատկութիւնները պետք ե հաշիւի առնել, չերք չերեխան խաղում ե ու աշխատում, չերք մեծերը կազմակերպում են նրա զբաղմունքները, նրա ժամանցն ու գվարճանքները:

**ՊԵՏՔ ԵՆ ԱՐԴՅՈՒՔ ԶՎԱՐՃԱՆՔՆԵՐ
ՅԵՐԵՆԱՅԻՆ**

Այս հարցին պատասխանելու համար նախ պետք ե պարզել՝ ի՞նչ ե գվարճանքը ե ի՞նչ

նշանակութիւնն ունի մեր կյանքում: Զվար-
 ճանքները տարբերվում են մեր առօրյայից
 նրանով, վոր 1) նման չեն այդ առօրյային
 և 2) մեզ հաճուչք են պատճառում: Մեծերի
 սովորական կյանքը իր մեջ բովանդակում է
 կրկնվող չերևույթներ, միևնույն մոմենտնե-
 րը—աշխատանք տանը, գործարանում, գրա-
 սենյակում, հոգսեր, գնումներ, չերեխաների
 խնամք, ժողովներ, ուտել, քնել և այլն:
 Այդ առօրյայից կտրվելու համար մարդիկ
 ձգտում են նորութիւնների,—հաճելի, նոր,
 անսպասելի միջավայր, դեմքեր, դեպքեր, ա-
 կումբ, թատրոն, կինո, միտինգ, գրոսանք,
 հյուր գնալ և այլն, մի խոսքով՝ անսովոր
 (վոչ սովորական, առօրյա) ապրումներ, ու-
 րախութիւն և հաճուչք, մանավանդ չեթե
 այդ բոլորը տրվում է պատրաստի, ան-
 սպասելի, տօնաց նախապես պահանջվող աշ-
 խատանքների:

Սրանուամեն և կայանում հին (կենցաղային)
 տոների գրավչութիւնը շատերի համար
 տիրող դասակարգը, չինովնիկները, տեր-
 տերները հաշվի չեն առել այս հանդաման-
 քը և տոները վերածել շքեղ ձևերի՝ ար-

տակարգ շուք, զգեստավորում, չերաժշտութիւնն (զանգեր), քաղցրահամ ուտելիքներ, աշխատանքների ընդհատում, ձրի հանդեսներ և այլն:

Իսկ չերեխային պէտք են զվարճանքները. չէ՞ վոր նրա առորչան միտկերպ ու տաղտուկ չի. ամբողջ աշխարհը, բնութիւնը, դեպքերը, չերևութիւնները նոր են նրա համար: Ամեն ինչ շոշափում և մեծ հաճույքով, շուռ ու մուռ տալիս, բռնում, գցում, կտրում, դիտում և: Միտինգը, ավտոն, գետի քչքչոցը, քամու վստոցը, ավազի հոսունութիւնը, թղթի պատուվելն ու ճմլվելը, պրտուղների համը, ամեն ինչ, ամեն բան նոր և, հետաքրքրական, պետք և շատ անգամ փորձել, չերկար զրադվել, և ամեն մի ժամը, ամեն մի բոպին նոր փորձ, նոր տպավորութիւնն և բերում չերեխային: Նրան անծանոթ և ճանձրալի առորչան, չեթե մեծերն իրենց միջամտութիւնամբ ու հաճախակի արգելքներով, չերբեմն ել աններելի անհոգութիւնամբ չեն խանդարում չերեխային: Յերեխան դուրահաւատ և, նմանվող. բացի այդ, նրա մեջ ուժեղ և չերևակա-

լութլուներ և այն, ինչ սրակաս և, բացակա-
լուս և առարկայի մեջ կամ ինչ ձեռքի տակ
չկա, բայց անհրաժեշտ և—չերեխան իր չե-
րեակայութեամբ և լրացնում: Շատ հեշտու-
թեամբ աթոռը ձի չե դառնում. մի քանի
աթոռները՝ գնացք, փայտի կտորը՝ տիկ-
նիկ-չերեխա. մի կուլտ ավագից վայրկե-
նապես քաղաք ու պարտեզ և ստեղծվում,
մի քանի «տոմսակներ» ու մի պլակատ— և
ահա կինոն կամ թատրոնը պատրաստ և:

Այսպիսով մենք տեսնում ենք, վոր չերե-
խան անհրաժեշտութիւնն չի զգում արհես-
տական զվարճանքների և քանի փոքր և
նա, այնքան ավելի չե կարողանում հետա-
քրքրութիւնները պարփակել իր խաղի, իր
զբաղմութեանի, իր ստեղծագործութեան մեջ:

Բայց նա գիտի, վոր կա թատրոն կամ
կինո, ցիրկ ու գազանանոց, ցուցահան-
դես, ձիարշավ և այլն. հետաքրքրվում և,
ուզում և տեսնել, մասնակցել, նմանվել,
նոր փորձ ձեռք բերել. տոները գրավիչ են
իրենց նորութեամբ, ազմուկով, շարժումով
ձայներով ու գույներով. գլուղի չերեխանե-
րը կպչում են իրենց մոր փեշերին, նրանց

հետ պարերի ու հարսանիք գնում, լարա-
խաղացին դիտում. քաղաքում ծնողները
շատ անգամ իրենք են խրախուսում և չերե-
խային քաշ տալիս կինո, համերգ, թատրոն,
հաճախ պարերեկույթ, կրկես կամ ակումբ:

Ի հարկե, չի կարելի ժխտել այս բոլորի
վտոռ ոգուտն ու հետաքրքրականութունը
չերեխայի համար. չե՞ վոր չերեխան նոր և
տեսնում այս բոլորը, շատ բանի առաջին
անգամ և ականատես լինում. նա ծանոթա-
նում է, դիտում, սովորում. բայց այս բո-
լորն ավելի քիչ և զվարճացնում նրան,
քան մեծին և ավելի չե հոգնեցնում տպա-
վորութունների շատութեամբ ու բազմա-
զանութեամբ, քան մեծին: Այս պատճառով
եկ պետք է մեկ-մեկ ծանոթանալ զվարճանք-
ներին և իմանալ՝ սրանցից վորն է ան-
հրաժեշտ և ոգտակար, ինչ չափով և վոր
տարիքի համար:

ԻՆՋՊԵՍ ԵՆ ՄԵՍԵՐԸ
ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ՉԱՄԱՐ
ԶՎԱՐՃԱՆՔՆԵՐ ԸՆՏՐՈՒՄ

Շատ անգամ մե-
ծերն իրենց ճաշակով
են զվարճանքներ
ընտրում, չերբեմն եկ

առանց մտածելու ընդառաջում են չերեխայի

ցանկութեան: Ահա հայրը կինո չե գնում՝ սիրաչին տեսարաններ, քաղաքացիական կովի ծանր պատկերներ կամ հետախուզական վորևե արկած տեսնելու. փոքրիկին ել հետն ե տանում: Յերեխան լսել ե, վոր «Բաղդադի գողը» հետաքրքրական նկար ե, խնդրում ե մորը՝ իրեն ել տանել: Յեկել են լիլիպուտները (թզուկներ) — ոպերետներ ե գնում. Դուրովը կենդանիներին ե խաղացնում — ե մեծ ու փոքր կրկես են վազում:

Կան ե պատահական, անկազմակերպ տեսարաններ («Թամաշա»), փողոցային քեֆ, թաղման չերթ, պատահական հրդեհ ե այլն. մեծերը լինեն, չլինեն — չերեխաները հո կան:

Յեթե վորևե բակում շարմանկան կամ աշուղն ե նվագում, չերեխաները լցվում են այդ բակը. չեթե արջ կամ կապիկ պարածողն ե անցնում, չերեխան մոռանում ե ամեն ինչ ե հետևում նրանց, մինչև թևից բռնած տուն են քաշ տալիս:

Շատ անգամ մեծերը դեմ չեն այս զվարճանքներին միմիայն նրա համար, վոր չերեխան զբաղվի ինչով ուզում ե լինի, միայն իրենց չխանգարի. իհարկե, սա սխալ

մոտեցում ե, պետք ե կազմակերպել չերե-
խաչի զվարճանքները, իսկ հասարակական
զվարճանքներին ընտրութեամբ մոտենալ:

ԿԻՆՈ

Կինոն մեծ գրավչու-
թյուն ունի մեծերի

և փոքրերի համար՝ շնորհիվ իր պարզու-
թյան, վառ տպավորութեանների, հարուստ
և գունեղ սլափերների և կյանքին մոտ՝ հա-
մոզեցուցիչ դեպքերի ու պայմանների: Սրա
վրա չեթե ավելացնենք կինոյի կրթական
դերը, դիտելիքներ հաղորդելու հնարավո-
րութեանները, այն հանգիստն ու հաճույքը,
վոր վաչելում ե պաուսիլ վիճակում դանվող
հանդիսատեսը, պարզ կլինի կինոյի ժողո-
վրդականացման գաղտնիքը: Չնայած դեռ
ևս չկան հատուկ կինոներ չերիխաների հա-
մար, մանկական սեանսները լիովին չեն
ծառայում դաստիարակչական նպատակ-
ների, իսկ մանկական հաջող ֆիլմերը
(նկարները) դեռ ևս շատ քիչ են, այնուամե-
նայնիվ դպրոցական չերիխային կինոն կա-
րող ե վորո՞ւ հափով ուստակար լինել: Իսկ
ինչ վերաբերում ե նախադպրոցականին—

կինոն բացարձակապես մնասակար է, և
ասան թե ինչու:

Մեկուկես — չերկու ժամ չերեխան անշարժ
նստած և մութ դահլիճում և լարված դի-
տում և արագ անցնող նկարը. բովանդա-
կությունը կարդալ — չի կարողանում, չեթե
բացատրում են, լավ չի լսում կամ չի կա-
րողանում հետեել նկարին. շուրջը նստած
են մարդիկ, վորոնց չի տեսնում, այս բանը
անսովոր ու անհաճո չի. գեպքերը փոփոխ-
վում են արագ, կապը չի ըմբռնում և հի-
շում և առանձին ուժեղ ու կոնկրետ մո-
մենտներ (վազք, թռիչք, սարսափ, կռիվ)...
այս բոլորը հոգնեցնում և չերեխային, շմեց-
նում ու նրա գլխում քառս (խառնաշփոթու-
թյուն) առաջացնում. հոգնում են աչքերը,
մեջքը, վզի ու կրծքի մկանները, չերեխան
ջղաչնանում է: Յերբեմն ծանր տպավորու-
թյունները խանգարում են չերեխայի քունը,
հետապնդում են նրան, չերբեմն ել բարդ,
նրա ուժերից բարձր խնդիրների առաջ
դնում:

Կինո նկարների բովանդակությունը մատ-
չելի չե նախադպրոցականներին. սպանու-

թյուն, գողություն, ծանր վիշտ ու ապրում-
 ներ, բարդ արկածներ ու դեպքեր, ան-
 սովոր շարժում, հսկայական ամբոխ (մաս-
 սա), անծանոթ վայրեր, կենդանիներ, քա-
 ղաքներ, անտեղի սուր կատակներ... և դեպ-
 քերի կապակցությունը չմբռնող, նկարի
 (նույն իսկ լավագույն) իդեոլոգիական (գա-
 ղափարական) կողմը չմբռնող չերեխան
 շփոթվում է, հուզվում, վշտանում, վախե-
 նում կամ սխալ չեզրակացություններ է ա-
 նում. — գողությունը — գովելի ճարպիկու-
 թյուն է, ցիրկի հետ տանից փախչելը — նշա-
 նավոր մարդ դառնալու միջոց է, թեթևսո-
 լիկությունը — գեղեցկություն է և այլն: Իսկ
 ամենից վատն այն է, վոր չերեխան սկսում
 է նմանվել՝ «Բաղդադի գողին» (հարստու-
 թյուն), «Զորույին» (հերոսություն), «Շոր
 ու Շորշորին» (սնահավատություն) և այլն:
 Կինոմոլությունը մի ախտ է, վորի պատ-
 ճառով չերեխան ստիպված է լինում փող
 խնդրել, գողանալ, առանց տոմսի անցնել
 և այլն: Ծիշտ է, մանկական-գեղարվեստա-
 կան ֆիլմերը, կարճ ու թեթև գիտական
 նկարները, պարզ, հետաքրքրական խրոնի-

կան ու անմեղ կատակ-չարածճիությունները հետաքրքրում են չերեխային, մանավանդ, չեթե մանկավարժական, դեկավարություն կա, սակայն, կրկնում ենք, այս բոլորը հարմար ե թերևս դպրոցականին, իսկ նախադպրոցականի համար կինոն բոլորովին ավելորդ ե:

ՄԱՆԿԱԿԱՆ ՔԱՏՐՈՆ

Յերեխաներին ավելի մատչելի ու ոգտակար ե թատրոնը. մանկական թատրոնները նոր չերեուչթ են և դեռ ևս բազմաթիվ թերություններ ունեն. մանկական թատրոն ասելով, պետք ե հասկանալ թատրոն մանուկների համար՝ մեծերի դերակատարությամբ. նախադպրոցականն իր եյությամբ չի կարող մասսայական դերակատար լինել, իսկ պատանիները միայն վորոշ դեպքերում կարող են մասնակցել: Մեր թված ԵԵԽԱԿԱԿԱՆ ԲԱԳԵՐՆ ՈՒՆԻ ՆԱԿ ԹԱՏՐՈՆԸ, մանավանդ նախադպրոցականի համար. այստեղ ել փոքրիկ հանդիսատեսը հոգնում ե, հուզվում, վախենում կամ ծանր ապրումներ ունենում (ինչպես, որինակ, Ֆրիցին տանջելը, ծեծելը և այլն՝ «Ֆրից Բաուեր» պիե-

սում)։ Ավելի ևս աննպատակահարմար և հին հեքլաթները բնագրելը («Կարմիր գըլխարկ», «Մոխրատըտիկ»)։ Վորոշ տեսակետով հաճելի լին ու ոգտակար մանկական ոպերաները, սակայն այստեղ ևլ պետք և խուսափել սիմվոլիկ (խորհրդավորութլուն, այլաբանութլուն), անրնական ու անսովոր ձևերից (կենդանուն մարդկային հատկութլուններ տալուց), բարդ գործողութլուններից ու բնական անսովոր կահավորութլունից։ Մանկական թատրոնն այժմ գրադված և այն խնդրով, թե ինչ պիեսաներ են հետաքրքրում չերեխային (վորոշ տարիքի), ինչն և դուր պալիս, ինչը չեն հասկանում և այլն։ Բացի այդ, թե պիեսը բնագրելուց առաջ, թե խաղի ժամանակ (գահլիճում և դուրսը՝ ֆոլիում) պետք և չերեխաների հետ համապատասխան մանկավարժական աշխատանք տանել։

ԽԱՄԱՃԿԱԽԱՂ ԿԱՄ
ՏԻԿՆԻԿՆԵՐԻ՝ ՅԱՏՐՈՆ

Այս խաղը շատ և տարածված Յեվրոպայում (սկարամուշկամ

մարիոնետիկ)։ Ռուսաստանում հնուց չե-


¹ Տիկնիկը (Кукла) հարերն շատ անուններ ունի, մեծ մասը՝ բարբառով. խամճիկ, խմաճիկ, խումաճիկ, խամաճուկ, պաճուճապատանք, պուպրիկ, պուպուկ, խրրձիկ, տիկին և այլն։

461 և Պետրուշկան, վոր սիրելի չեք թե մե-
ծերին (հասարակ ժողովրդին) և թե չերե-
խաներին: Մոսկվայում և ուրիշ քաղաքնե-
րում կան հասուկ թատրոններ (театр Пе-
трышки). սրան նման և մարիոնետների
(տիկնիկների) թատրոնը իր բազմազան
հերոսներով («գործող անձինք»): Պետրուշ-
կան, առանց սեփական թատրոնի, տարած-
ված և ԽՍՀՄ շատ տեղերում, դպրոցնե-
րում, մանկապարտեզներում. հայերի մեջ
լստ չերևույթին չի չեղել տիկնիկների թատ-
րոն կամ Պետրուշկա. դերակատար տիկնիկը
հայերի մեջ հրապարակ և դալիս կրոնական
միսիայով (կոչումով), իբրև նուրից (խուշ-
կուրուիկ, խուշկուրուրա, խուրձկուլուլու,
պուրպատիկին և այլն¹), վորը չիրաշտ ժա-
մանակ դուրս են հանում, վոր անձրև գա:
Սակայն նուրինի փոխարեն նրան պտտող-
ներն են չերգում («նուրին նուրինն եկել ա,
Աջբա հուրինն եկել ա, շիլա շապիկ հագել
ա... չիղ տվեք... ձու տվեք...» և այլն¹):

Նախադպրոցականների Պետրուշկան ու

¹ Պետրյան, Սոս և Վարդ. — նուրինի յերգը. տես նաև Ազգագր. հանդես — գիրք 17:

5567
H
2081



խամաճկախաղն առանձին համակրանք ու
սեր են ձեռք բերել. Մոսկվայում չերեխա-
ները Պետրուշկայի մշտական հանդիսատես-
ներն են, տիկնիկների թատրոնները միշտ
լի լին մանուկ-հանդիսականներով, Թիֆլիսի
և ուրիշ քաղաքների մանկհիմնարկներում
Պետրուշկայի չելույթները սովորական են.
Կան նույնպես փողոցում, շարմանկայի հետ
շրջող Պետրուշկաներ: Ինչո՞ւ և գաղտնիքը,
ինչո՞ւ փոքրիկին սիրելի չեն Պետրուշկան
ու մարիոնետկաները: Ահա թե ինչու—չե-
րեխաներին դուր է գալիս ծիծաղը, կա-
տակը, անհող տրամագրութունը, դերա-
կատարներից՝ հաճաքչին, կովարարը, պար-
ծենկոտը, պարզախոսը, հեգնողն ու սրա-
խոսը՝—իսկ այս բոլոր հատկութուններն
ունի Պետրուշկան: Նա միշտ կատակում է,
շատ պարզ է խոսում, պարծենում է, բայց
իսկույն խոստովանվում է իր սխալը, ծաղ-
րում է անգործներին, ծուլներին և ոգնում
և խեղճերին. Պետրուշկան նաև լավ մանկա-
վարժ է, նա իր դիմումներով մասնակից է
դարձնում հանդիսատես չերեխաներին, հար-
ցեր է տալիս, չերգում նրանց հետ և այլն:

Պետք է ամեն կերպ աշխատել, վոր Պետ-
րուշկան մուտք գործի նաև մեր դպրոցը,
մանկատունը, մանկապարտեզը. մանկական
թատրոնի գործում Պետրուշկան իր տեղն է
ունենալու:

Տիկնիկների թատրոնը նման է Պետրուշ-
կային. գործողությունները պարզ են, կարճ,
ցայտուն. խորհրդային մարիոնետները ար-
դեն վորոշ տիպեր ունեն՝ տերտերը, նեպ-
մանը, կուլակը, սպեկուլյանտը և սրանց դեմ՝
բանվորը, գյուղացին, կարմիր բանակայինն
ու պիտները: Այստեղ հանդես են գալիս նաև
կենդանիները, հին առակների դերակատար-
ները (արջ, գալ, աղվես, կապիկ, կկու,
ագռավ և այլն), վորոնցից շատերը ծանոթ
են չերեխային իր խաղալիքներից, տանը և
հիմնարկում ունեցածից ու տեսածից:

Խամաճկախաղի առավելությունը նաև
նրանումն է, վոր տիկնիկներ պատրաստելը
չափազանց հեշտ է—հագուստը՝ հին լաթե-
րից, դեմքերը՝ թղթից, կամ պապե մաշեից
(խմորած կարտոն). հարկավոր է հմտու-
թյուն՝ նրանց մատների վրա խաղացնելու
և զանազան ձայներով խոսելու համար:

Մարիոնեաները խաղացնելն ավելի զժվար
ե. նրանց շարժում են վերևից կապած բա-
րակ թելերի միջոցով:

Հասարակ ձևով կարելի չե պատրաստել
նաև կարտոնի թատրոն՝ կարտոնից կտրած
մարդկանց տախտակի վրա շարելով ու շար-
ժելով. հեշտ և նաև «չինական սովերներին»
թատրոնը («դարագյոզ»): չերկու դեպքում
ել չերեխաներն իրենք կարող են դերերն
հնարել ու խոսակցութունները հարմարեց-
նել:

Ահա նախադպրոցական չերեխային հա-
ճելի ու մատչելի միակ թատրոնը:

Մոզական լապտերի մատչելի նկարները
կարող են հետաքրքրել, թեպետ զուրկ են
կինոյի ու թատրոնի առավելութուններից—
շարժունութուն ու կապ գործողութունների
մեջ: Նկարներին ուղեկցելու չե մշակված
զրույցը:

Այն, ինչ ասացինք
4ԻԿԵՍ (ՑԻԻԿ) կինոյի ու թատրոնի
մասին, վերաբերում
և նաև ցիրկին. վատ ող, նեղվածք, հաճախ
կեղոն անպակաս և այստեղ, մանավանդ

վոր հանդիսասրահին մոտ, գոմերում ու վանդակներում, տեղավորում են կենդանիներին, վորոնք ավելի չեն փշացնում սղը: Մարմնամարզական տրյուկները (դժվար, արկածալի գործողություններ) ջղաչնացնում են, չերբեմն սարսափ ազդում. իսկ ծաղրածուների սրախոսությունների իմաստը չերեխաներին անհասկանալի չե մնում և ավելի ուշադրություն են գրավում նրանց գոեհիկ խոսքերն ու տգեղ շարժումները: Յերեխաները նմանվող են և շատ սովորական բան է, չերբ ցիրկից վերադարձող չերեխան կամ աթոռների գլխին է բարձրանում կամ սանդուխներից կախվում ու զանազան վտանգների չենթարկվում:

Յիրկում չերեխաների համար հետաքրքրական են վարժեցրած կենդանիները, չեթե աչդ նպատակով հատուկ ներկայացում է տրվում: Յերեխաները տեսնում են ու համոզվում, վոր կենդանիներն աչնքան ել «անբան» չեն, վոր համբերությամբ ու սիրով (և վոչ թե խստությամբ) նրանց շատ բան կարելի չե սովորեցնել: Բացի աչդ, աչսպիսի հատուկ ներկայացումները չերկար

չեն տևում ու չերեխաներին չեն ձանձրացնում:

Մեծ քաղաքներում
ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻ Կան կենդանաբանա-
ՅԵՎ ԳԱԶԱՆԱՆՈՑ Կան այգիներ, վոր-
տեղ կարելի չե տեսնել աշխարհիս բոլոր
կողմերից բերված կենդանիներին, իրենց
բնական միջավայրում (ջրերում, ժայռերի
մեջ, վորջերում և այլն): Կան նաև գազա-
նանոցներ, վորտեղ կենդանիներին վան-
դակների մեջ են պահում: Այս կենդանի-
ները շատ են հետաքրքրում չերեխաներին,
միայն պետք է դրանց աստիճանաբար ծա-
նոթացնել, չի կարելի միանգամից շրջել գա-
զանանոցը, ուշադրութուն հրավիրել բոլորի
վրա, մանավանդ վոր շատերը (առյուծ,
գայլ, վագր, լուսան) չերեխաներին վախ են
պատճառում: Մինչդեռ ուրիշ կենդանիներ
անչափ հետաքրքրում են՝ հսկա փիղն իր
շարժուն ու ձեռքը փոխարինող կնճիթով,
արագավազ պոնին (շոտլանդական ձի՝ ի-
շուկի չափ), շատախոս թութակը, ազիվազ
պարկերին, վսեմ կարապը, հպարտ ընձուղ-
տը, վայելչակազմ գերբան և այլն: Այս-

պիտի ալգում, մաքուր ողի մեջ չերեխան
կարող ե ժամերով մնալ, դիտել կենդանի-
ներին, նրանց շարժումները, ուտելու ձևերը,
լող տալը և տլն: Պետք ե սակայն սկսել
ծանոթ, չերեխաներին սիրելի կենդանինե-
րից (փիղ, արջ, կապիկ և այլն) և այնպես
չանել, վոր չերեխան միանգամից շատ բան
տեսնի և հոգնի կամ ձանձրանա:

Գյուղի չերեխաները
ԲՆՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՀԱՍԱՐԱ- մի մեծ առավելու-
ԿԱԿԱՆ ՏՈՆԵՐ թյուն ունեն. այդ այն

ե, վոր շատ մոտ են բնության. վատն այն
ե սակայն, վոր մեծերն անուշաղիր են թող-
նում այս հանգամանքը և կամ հետներն են
քաշ տալիս հեռու և դժվար տեղեր, հոգնեց-
նում են կամ, ընդհակառակը, չեն թողնում
խրճիթից հեռանալ. մինչդեռ ինչքան հա-
ճելի ու ոգտակար ե լինել անտառում, գե-
տափին, մարգագետնի վրա, վայելել ազատ
ողը, ջուրը, արևը. խաղալ ծաղիկների ու
թիթեռների մեջ, տեսնել գույները, լսել
ձայները, ճանաչել, դիտել բնությունը:

Քաղաքում ել կարելի չե ոգտագործել
բնությունը, չեթե ծնողներն ազատ որերը

լիբեխաներին մոտակա դաշտ, անտառ կամ
 գետափ տանին, սակայն հաշվի առնելով
 վոչ թե իրենց ժամանցը («քիֆ»), այլ լիբե-
 խաների պահանջը: Չպետք է վտարով հե-
 ոու տեղ տանել, դեռ ու դեն քաշ տալ.
 պետք է մտածել նրանց սննդի, բացթյա
 հանգստի, խաղերի մասին ու չուշացած
 տուն վերադառնալ: Թող կարճ տևեն, բայց
 հաճախակի լինեն այսպիսի զբոսանքները:

Յերեխաները սիրում են նաև մասսայական
 ցույցերը. տոների նախորդակին նրանք
 արդեն վորոշում են՝ ուր գնալ. իսկ տո-
 ներին — հրճվում են շարքերով, չերգով ու
 նվագով, ոիթմիկ քայլերթով, դրոշակներով:
 Կազմակերպված մասսան բարձրացնում է
 չերեխաների տրամադրութունը:

ԽԱՂԸ ՅԵՐԵԽԱՅԻ
 ԿՅԱՆՔՈՒՄ¹

Յերեխայի ակտի-
 վության հիմնական
 ձևերն են՝ խաղն ու

աշխատանքը, վորոնք ուղղություն են տա-
 լիս և նպաստում նրա (մանկան) աճման
 ու զարգացման: Խաղն ու աշխատանքը հիմ-
 նական նշանակություն ունեն չերեխայի

¹ Խաղի մասին կան առանձին գրքույկներ. «Խաղն
 ու աշխատանքը» և «Յերեխալի խաղալիքները»:

համար. — առաջին՝ ավելի, քան մյուս գործունեութիւնները չերեխաւին մոտեցնում են ուսուցիչականութեան. չերկրորդ՝ գործադրութեան մեջ են դնում չերեխաւի որդանիդմն ամբողջութեամբ (թե ֆիզիկական, թե մտավոր կողմերը). չերրորդ՝ համապատասխանում են մանկան աճող որդանիդմի կենսական պահանջներին, ձեռքերպելով նրավարքն ու անձնավորութիւնը: Սաղի միջոցով կարելի չէ վաճ միայն ուսումնասիրել չերեխաւին, այլև դաստիարակել. խաղը դաստիարակչական մեծ հնարավորութիւններ և պարունակում իր մեջ:

Քանի փոքր և չերեխան, այնքան շատ և խաղում. ամենամեծ, առողջ ու ոգտակար զվարճանքը խաղն է, խաղի ժամանակ չերեխան «խաղում» է, դերակատար և դառնում, վոր ստեղծագործում և ապրում է, առանց հաշվի առնելու իրեն դիտողներին: Սաղի միջոցով չերեխան ծանոթանում է շրջապատին, կշանքի փորձ և ձեռք բերում. ընդհանուր խաղերը նրան կոլեկտիվ կշանքի չեն վարժեցնում, դաստիարակում են նրա բնավորութիւնը. չերեխան սովորում

և տոկունութիւն, համբերութիւն, մրցում, ընկերականութիւն: Խաղը նպաստում է ֆիզիկական առողջօցման, ղեկավարում է շարժումները: Փոքրերը սիրում են խաղալ չերկուսով («ձի-ձի», գնդակ), չերեքով («չես տարա», «գալլ ու աղվես»), մեծերը խաղում են խմբով («գնացք», «դրոշակներ», «սկչուռը» և այլն): Խաղերին կարելի չէ միացնել չերգ, նվագ:

Խաղերը ծախս ու պատրաստութիւն չեն պահանջում. խաղեր կարելի չէ սովորել պիտաներներէց, մանկական ամսագրերէց, գրքերէց:

Խաղերը պետք է բացոթչա լինեն. պետք է ոգտագործել գործիքներ, թմբուկ, դրոշակներ, սալլտկ, պատղարակ, գնդակ, դանդեր, սահնակ և այլն:

Վատ չեղանակներին կարելի չէ խաղալ պատշգամբում, սենյակում, սեղանի վրա; խաղի անկյունում. նստած տեղն էլ կարելի չէ խաղալ («մատանի», լուցկի, կառուցումն և այլն):

Յերեխաները սիրում են նաև չերգը, պարն ու նվագը. չերբ պետք է՝ նա իր սի-

փական չերգն և հնարում ու չերգում. պետք է նրանց համար մանակական չերգեր չերգել, հարմար պարեր ու ուրիշիկ շարժումները ցույց տալ: Դժվար չի նաև մանակական նվագախումբ (шумовой оркестр) կազմակերպել. կարելի չե վերցնել 1—2 սանրեր, ծածկել ծխախոտի թղթով ու շրթունքներով նվագել. սրանց կարելի չե միացնել շշեր (ջուրը տարբեր բարձրության ածել) և փայտիկներով հարվածել. ավելացրեք նաև շվիներ, սուլիչներ, թմբուկ և կստանաք բավականին աղմկալի նվագ:

1. Քանի փոքր և
 ՈՒՐԵՄՆ ԻՆՁ ԶՎԱՐՃՈՒ- չերեխան, այնքան
 ՅՅՈՒՆՆԵՐ ՊԵՏՔ Ե ՏԱԼ քիչ կարիք է զգում
 ՅԵՐԵԱՅԻՆ ՅԵՎ ԻՆՁՊԵՍ արհեստական զվար-
 ճանքների:

2. Յերեխայի համար ամենաոգտակար ու առողջ զվարճանքը— խաղն է, չերգ-նվագն ու պարը:

3. Կինոն մնասակար է նախադպրոցականի համար:

4. Յերեխան սիրում է մոզական լապտերի նկարները, մանավանդ տիկնիկների թատրոնը:

5. Յիրկում կարելի չի տեսնել միայն վարժեցրած կենդանիներին:

6. Կենդանիներին դիտելը ողտակար զվարճանք է, միայն աստիճանաբար և ծանոթից սկսելով:


7. Բնության մեջ չերեխան հարուստ տպավորություններ և ստանում, վաչելում է ողբ, ջուրն ու արևը:


8. Զրոսանքները լինելու չեն հաճախ, բայց մոտիկ և կարճ տևողությամբ:


9. Տոներն ու ցույցերը հեռաքրքրում են չերեխաներին:

10. Ընդհանուր խաղերն անհրաժեշտ են:

Մեծը չերեխի իր նաեակով բոլ չրևիսի չերեխայի զվարճանքը, այլ հաշվի առնի չերեխայի տարիքը, ուժերը, ցանկությունը և զվարճանքի մանկավարժական արժեքը:







ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0043923

[064.]

A $\frac{1}{7955}$

Գրքը 7 կ. Մ (1 մ.)



Сост. Дургарян
ИГРЫ И ЗАБАВЫ ДОШКОЛЬНЫХ
ДЕТЕЙ

Госиздат ССР Армении
Эривань, 1929 г.
